

<<ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ>> ՀԿ



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Ձ Ո Տ Ա Կ Ա Ն

Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեմա՝ Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ Առարկա՝
անգլերեն

Հետազոտող ուսուցիչ՝ Հարությունյան Լուսինե

Ուսումնական հաստատություն՝ Հ. Խաչատրյանի անվ. հ. 199 հիմնական դպրոց

ԵՐԵՎԱՆ-2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն	2
Ներածություն	3
Գլուխ 1.Ընտանեկան Հոգեբանություն, Կոնֆլիկտներ.....	4
1.1 Կոնֆլիկտի հիմնական ձևերը և զարգացման փուլերը.....	8
1.2 Ընտանեկան կոնֆլիկտների նկարագիրը.....	10
Գլուխ 2 Կոնֆլիկտների ազդեցությունը երեխայի հոգեբանության վրա.....	13
2.1 Ծնողներից մեկի բացակայությունը երեխայի կյանքում.....	15
2.2 Երեխայի դաստիարակությունը.....	16
Եզրակացություն.....	18
Օգտագործված գրականության ցանկ.....	19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Երեխայի անձի ձևավորումն առաջին հերթին տեղի է ունենում ընտանիքում, և ընտանեկան մթնոլորտը, հարաբերությունները, դաստիարակությունը վճռորոշ ազդեցություն են ունենում երեխայի ներդաշնակ զարգացման և հոգեկան առողջության վրա: Ընտանեկան կոնֆլիկտների արդյունքում առաջին հերթին տուժում են երեխաները, որոնք ունենում են անձնային զարգացման խեղաթյուրումներ և վարքի խանգարումներ:

Հետազոտության նպատակն ու խնդիրները:

- բացահայտել ընտանիքներում առաջացող կոնֆլիկտների հիմնական պատճառները, ներկայացնել դրանց հաղթահարման ուղիները,

- ներկայացնել ժամանակակից ընտանիքների խնդիրները, առանձնահատկությունները,

Աշխատանքում նկարագրված են ընտանեկան կոնֆլիկտների տեսակները, դրանց առաջացման պատճառները և դրանց բացասական հետևանքները երեխայի անձի ձևավորման վրա:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1

1.1 ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ,

ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ

Բոլոր ժամանակներում էլ ընտանիքում տարբեր պատճառներով ծագել

են կոնֆլիկտներ: Հաճախակի կոնֆլիկտներն ազդում են ընտանիքի հոգեբանական մթնոլորտի վրա, քայքայում հարաբերությունները, ընտանիքի անդամների

մեջ առաջացնում սթրես, լարվածություն, տհաճ հոգեվիճակներ: Ընտանեկան

կոնֆլիկտների արդյունքում առաջին հերթին տուժում են երեխաները, որոնք ունենում են անձնային զարգացման խեղաթյուրումներ և վարքի խանգարումներ: Երեխայի անձի ձևավորումն առաջին հերթին տեղի է ունենում ընտանիքում, և ընտանեկան մթնոլորտը, հարաբերությունները, դաստիարակությունը վճռորոշ ազդեցություն են ունենում երեխայի ներդաշնակ զարգացման և հոգեկան առողջության վրա:

Ընտանիքում ձևավորվում են երեխայի բնավորությունը, ինքնագիտակցությունը, ինքնագնահատականը, բարոյական պատկերացումները, սոցիալական դիրքորոշումները, երեխան յուրացնում է վարքի կանոնները, տեղի է ունենում անձի սոցիալականացում:

Շատ կարևոր է ուսումնասիրել ընտանեկան հարաբերություններում տեղի ունեցող տեղաշարժերը, ընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ներդաշնակ ձևավորման վրա:

Գոյություն ունի “կոնֆլիկտ” հասկացության մի քանի սահմանում:

Բ. Մ. Ռեբուսը կոնֆլիկտը բնութագրում է որպես մարդկանց գիտակցության մեջ միմյանց հանդեպ հակադարձ ուղղված և անհամատեղելի միտումների բախում՝ կապված բացասական սուր հուզական ապրումների հետ:

Ըստ վիճակագրական տվյալների ընտանեկան կոնֆլիկտների հիմնական պատճառը հաղորդակցման կուլտուրայի, փոխադարձ վստահության, քաղաքավարության, ուշադրության, բարյացակամության, նրբազգացության բացակայությունն է: Իրականում կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ հոգեբանական անհամատեղելիությունը, սեռական խնդիրները, միմյանց մտադրությունները չհասկանալը, վարքի սխալ մեկնաբանությունները, բարոյականության վերաբերյալ տարբեր մոտեցումները, պարտքի և պատասխանատվության զգացումի բացակայությունը և այլն:

Ամուսնական կոնֆլիկտները հաճախ առաջանում են զույգերի ֆիզիկական և հոգեբանական անհամատեղելիության պատճառով: Հոգեբանական համատեղելիությունը պայմանավորված է ամուսինների խառնվածքի տիպով և բնավորության գծերով: Որքան ամուսինները նման են իրար բնավորությամբ և խառնվածքով, այնքան ավելի շատ են նյարդայնացնում և հոգնեցնում միմյանց:

Ներդաշնակ զույգ կարող են լինել օրինակ սանգվինիկ ամուսինն ու մելանխոլիկ կինը:

Տիզիկական համատեղելիությունը պայմանավորված է կնոջ և տղամարդու օրգանիզմի կառուցվածքով, սեռական օրգանների առանձնահատկություններով, որոնք էական նշանակություն ունեն սեռական կյանքում: Արդեն ապացուցված է, որ սեռական անբավարարվածությունը, ինտիմ կյանքում առկա խնդիրներն առաջացնում են սառնություն ու անտարբերություն կին-տղամարդ հարաբերություններում: Ընտանիք կազմելիս հարկավոր է հաշվի առնել նաև այն, որ տղամարդկանց օրգանիզմի վերջնական ձևավորումը տեղի է ունենում 25 տարեկանում, իսկ կանանց օրգանիզմի վերջնական ձևավորումը՝ 18-20 տարեկանում: Բացի այդ, տղամարդկանց սեռական հակումն ավելի երկար է պահպանվում, քան կանանց: Ուստի, կենսաբանական տեսանկյունից ցանկալի է, որ զույգ կազմելիս տղամարդը լինի տարիքով ավելի մեծ, որպեսզի սեռական

կյանքում լինի ներդաշնակություն:

Կնոջ և տղամարդու սեռական ներդաշնակության տարիքային

հարաբերակցումը

Սեռ	Տարիք								
Կին	18	21	24.5	28	31	35	37.5	49	
Տղամարդ	23	27	31.5	35	39	45	49.5	63	

Ամուսնական կոնֆլիկտների առաջացման մյուս հաճախակի հանդիպող պատճառը տղամարդու՝ որպես լոկ ֆինանսի աղբյուր դիտարկվելն է: Այն միտքը, որ ընտանիքի անդամները ֆինանսապես տղամարդուց կախվածության մեջ են, սկսում է ճնշել և բացասաբար անդրադառնալ նրա հոգեկանի վրա: Արդյունքում թուլանում է նրա կապը նախ՝ կնոջ, ապա՝ երեխաների հետ: Գոյություն ունեն նաև այնպիսի ընտանիքներ, որտեղ բավականին բարձր է կոնֆլիկտայնության աստիճանը, իսթարված է ընտանիքի անդորրը, միջանձնային հարաբերություններում առկա է լարվածություն: Դրանք են.

- ներոտիկ ընտանիքներ, որտեղ զույգի մոտ նկատվում են տազնապայնության բարձր մակարդակ, քնի խանգարում, ագրեսիվություն,
- ճգնաժամային ընտանիքներ, որտեղ ամուսինները թշնամաբար են տրամադրված միմյանց նկատմամբ, հաշվի չեն առնում միմյանց հետաքրքրությունները, հակված չեն փոխզիջման,
- պրոբլեմային ընտանիքներ, որտեղ առկա խնդիրների, կյանքի ծանր պայմանների արդյունքում ընտանիքը հայտնվում է անկայուն վիճակում:

Մշտական վեճերը, կոնֆլիկտները միանշանակ ազդում են ինչպես ամուսնական զույգի, այնպես էլ երեխայի հոգեկան առողջության վրա: Ծնողների միջև ծագած կոնֆլիկտի արդյունքում երեխան կարող է ունենալ մեղքի զգացում՝ կարծելով, որ ինքն է հանդիսացել կոնֆլիկտի պատճառ: Որոշ դեպքերում էլ երեխայի մեջ կարող է առաջանալ վախի զգացում: Սա նկատվում է հատկապես այն ժամանակ, երբ երեխան ակնատես է լինում ծնողների վեճին կամ բռնության տեսարանների: Այսպիսի երեխաներն ապրում են մեղքի, վախի զգացումով, լինում մեկուսացված ու անհանգիստ, նաև կարող են ունենալ նյարդային, հոգեւոմատիկ և այլ հիվանդություններ: Հարկ է նշել, որ որոշ երեխաների համար էլ կոնֆլիկտը դառնում է սովորական մի երևույթ: Հետագայում՝ հասուն տարիքում, նրանք այդ նույն անտարբերությունը դրսևորում են շրջապատող մարդկանց, երևույթների նկատմամբ, դառնում են սառնասիրտ, ունենում ապրումակցման ցածր մակարդակ: Այս երեխաների ծնողները, տարված լինելով հարաբերություններ պարզելով, չեն նկատում, որ իրենց երեխան ձեռք է բերում բնավորության բացասական գծեր, կատարում անընդունելի արարքներ, դրսևորում հակասոցիալական վարքագիծ:



Ծնողները ժամանակի առումով առաջին դաստիարակներն են: Նրանք ամեն օր շփվում են երեխաների հետ, գիտեն նրանց հոգսերը: Ընդ որում, հայրը կամ մայրը տարբեր կերպ են շփվում տղայի կամ աղջկա հետ: Հակառակ սեռի մարդու հետ ունեցած հարաբերությունների մոդելը երեխայի մեջ

ընդհանուր գծերով ձևավորվում է արդեն մինչև դպրոց գնալը, քանի որ վաղ մանկական հասակում դաստիարակությունը ընթանում է ծնողների հետ իրեն նմանեցնելու ճանապարհով: Տղան հոր վարքագծում գտնում է իր սեփական սեռական դերի, իսկ մոր կերպարում՝ իր ապագա ընտրյալի օրինակը: Նույնը կարելի է ասել նաև աղջկա մասին:

Ոչ նպաստավոր վիճակում են գտնվում նաև իշխող մայրերի (այսպես կոչված՝

մայրիշխանություն) որդիները: Ինքնուրույնության ճնշումը և հոր՝ որպես տղամարդու աղավաղված օրինակը բացասաբար են անդրադառնում տղայի բնավորության առնական գծերի ձևավորման և վարքագծի վրա:

Առավել բարեհաջող է ընթանում երեխայի անձի և նրա առնականության կամ կանացիության ձևավորումը լիարժեք ու ներդաշնակ ընտանիքում, որտեղ ծնողների հարաբերությունները կառուցվում են տղամարդկային կամ կանացի էության փոխադարձ հարգանքի և փոխօգնության հիման վրա: Վարքագծի տղամարդկային և կանացի տիպարների ձևավորումը զգալիորեն բարդանում է ոչ լիարժեք ընտանիքներում:

1.2 Կոնֆլիկտի հիմնական ձևերը և զարգացման փուլերը

Առավել ընդունված է կոնֆլիկտների դասակարգումը չորս հիմնական ձևերի՝

- Ներանձնային
- Միջանձնային
- Անձի և խմբի միջև
- Միջխմբային

1. Ներանձնային կոնֆլիկտը առաջանում է այն ժամանակ, երբ ղեկավարության կողմից աշխատողին ներկայացվում են հակասական պահանջներ կամ այդ պահանջները չեն համընկնում աշխատողի անձնական պահանջմունքների և արժեքային համակարգի հետ: Ներանձնային կոնֆլիկտ կարող է առաջանալ նաև աշխատանքի գերձանրաբեռնվածության կամ թերձանրաբեռնվածության ժամանակ, երբ,

որպես դրա հետևանք, աշխատողն ունենում է անբավարարվածության զգացում աշխատանքի նկատմամբ, անվստահություն իր և կազմակերպության նկատմամբ, ինչպես նաև ապրում սթրեսային իրավիճակ:

2. Կոնֆլիկտի ամենատարածված ձևը միջանձնայինն է: Այն պայմանավորված է ինչպես ռեսուրսների սահմանափակվածության հետևանքով կազմակերպության տարբեր ստորաբաժանումների ղեկավարների միջև ստեղծված պայքարով, երբ յուրաքանչյուր կողմ ձգտում է ստանալ առավելագույնը, այնպես էլ մարդկանց տարբեր հայացքների, խառնվածքների, արժեքների հետևանքով և ավելի շատ հոգեբանական բնույթ ունի
3. Անձի և խմբի միջև կոնֆլիկտն առավել հաճախ առաջանում է այն ժամանակ, երբ անձն ունենում է այնպիսի շահեր և դիրքորոշում, որոնք տարբերվում են խմբի դիրքորոշումից: Կոնֆլիկտի այս ձևը կապված է նաև անձի և խմբի սպասելիքների տարբերության հետ: Այս ձևի կոնֆլիկտ կարող է առաջանալ խմբի և ղեկավարի միջև վերջինիս կողմից պաշտոնական պարտականություններից ելնելով, այնպիսի գործողությունների կատարման հետևանքով, որոնք անընդունելի կդիտվեն խմբի կողմից:
4. Միջխմբային կոնֆլիկտը կարող է լինել ոչ ձևական խմբերի և ղեկավարության միջև, երբ խմբի կողմից ղեկավարության գործողությունները անարդարացի են համարվում կազմակերպության ստորաբաժանումների միջև:

Իրականում, կոնֆլիկտային իրավիճակը մեծամասամբ իր լուծումը չի գտնում սկզբնական փուլում: Այն զարգանում է աստիճանաբար և դրսևորվում է լուրջ հակամարտության ձևով: Ինչ վերաբերում է կոնֆլիկտի հետևանքնորին, ապա, դրանք կարող են լինել ֆունկցիոնալ և հանգեցնել կազմակերպության գործունեության արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև

դիսֆունկցիոնալ, հանգեցնելով կազմակերպության նպատակների իրականացման արդյունավետության, անձնական

բավարարվածության, խմբային համագործակցության մակարդակի կտրուկ իջեցման:

Ինչ վերաբերում է արդյունավետ կառավարել կոնֆլիկտային իրավիճակը, նշանակում է ժամանակին պարզել կոնֆլիկտի առաջացման պատճառները, մակարդակը, օժանդակել կառուցողական կոնֆլիկտների ձևավորմանը, հետևել դրանց զարգացման ընթացքին, կանխել կազմակերպության համար կործանարար և վնասաբեր կոնֆլիկտների զարգացումը դրանց լուծման համար կիրառելով իրավիճակին առավել համապատասխան եղանակը:

1.2 Ընտանեկան կոնֆլիկտների նկարագիրը

Ընտանեկան կոնֆլիկտների հիմքում ընկած է ամուսինների նպատակների և հետաքրքրությունների օբյեկտիվ տարբերությունները, որը հարաբերություններում ընդունվում է որպես հակադրություն:

Մարդը աշխատում է հնարավորինս վիրավորելով դիմացինին բարձրացնել "Ես"-ի արժեքը: Կոնֆլիկտի հիմնական պատճառը անձնավորության որևիցե պահանջմունքի չբավարարված լինելն է: Սկսած ֆիզիկական, կենսաբանական, ֆիզիոլոգիականից մինչև հոգևոր պահանջմունքները: Ընտանիքի համար ճգնաժամային շրջաններն են՝

- Միմյանց հարմարվելու փուլ՝ ամուսնական կյանքի առաջի տարին է, երբ ձեվավորվում է նոր որակի հարաբերություններ, նոր հոգևոր արժեքներ:

- Երեխա ունենալու փուլ՝ երեխաների ծնունդը բարդացնում է ամուսինների մասնագիտական աճի հնարավորությունները, քիչ ժամանակ է տրամադրվում

անձնական գրավիչ գործունեությանը (հորբի), կնոջ հոգնածության պատճառով, կապված երեխայի խնամքի հետ, ժամանակավոր սեռական ակտիվության նվազումը:

- Բախման փուլ՝ երեխաների դաստիարակության վերաբերյալ ամուսինների և նրանց ծնողների հայացքների, տեսակետների բախումը:

- Միապաղաղության, կամ միջին ամուսնական տարիքի փուլ՝ այս շրջանը երբեմն անվանում են նաև զգացմունքների հագեցվածության փուլ, կամ քաղցի շրջան:

- Իվոլուցիոն, կամ միայնակության զգացման փուլ: Այս շրջանը համարվում է 18-ից 24 տարի համատեղ կյանքից հետո, որը հաճախ համընկնում է ինվոլուցիոն շրջանի հետ:

Ընտանեկան կյանքը մի ամբողջ գիտություն է, որը շատ բարդ է և անըդիստ զարգացող, քանի որ երկու ճակատագրեր միացել են և դարձել ընդհանուր երկու աշխարհներ: Անհրաժեշտ է ապրել ընդհանուր հոգսերով, հաջողություններով:

Ընտանիքի անդամների միջև միշտ առկա է պայքար հանուն իշխանության, հանուն որոշումների կայացնելու իրավունքի: Օրինակ, ծնողի և երեխայի միջև որոշակի պայքար է առաջանում, թե տարբեր խնդիրների շուրջ ով է վճիռ կայացնելու: Միջամուսնական կոնֆլիկտների առաջացումն ավելի հավանական է դառնում հետևյալ պայմանների առկայության դեպքում կամ հետևյալ պատճառներով.

- ✓ սեփական ես-ի նշանակալիության, կարևորության պահանջմունքի, չբավարարվածության, ամուսիններից մեկի սոցիալական դիրքի ցածրացում,
- ✓ դրական հույզերի, պահանջմունքի, չբավարարվածության, քնքշանքի հասկանալու և փոխըմբռնման բացակայության և այլն,
- ✓ ցածր կրթամակարդակ
- ✓ աշխատանքի բացակայություն և ֆինանսական դժվարություններ
- ✓ կախվածություն ծնողների ընտանիքներից:

Ամուսնական կոնֆլիկտները հաճախ առաջանում են զույգերի ֆիզիկական և

հոգեբանական անհամատեղելիության պատճառով: Հոգեբանական համատեղելիությունը պայմանավորված է ամուսինների խառնվածքի տիպով և բնավորության գծերով: Որքան ամուսինները նման են իրար բնավորությամբ և խառնվածքով, այնքան ավելի շատ են նյարդայնացնում և հոգնեցնում միմյանց:

Վեճերի ժամանակ գլխուղեղի կեղևում առաջանում է օպտիմալ գրգռման օջախ, որը կարող է ընդգրկել ահռելի ու ավելի կետերի տարածք:

Այս դեպքում մարդը կորցնում է ինքնատիրապետումը, դիմացինին լսելու ունակությունը և վեճը վերածվում է կոնֆլիկտի: Ցանկացած վեճի հիմքում ընկած է անհատականության երևույթը, այսինքն անհատականը:

Գլուխ 2

Կոնֆլիկտների ազդեցությունը երեխայի հոգեբանության վրա

Կոնֆլիկտային իրադրությունը երեխային դարձնում է սառնասիրտ, չշփվող, անուշադիր, ագրեսիվ, կոպիտ կամ էլ անվստահ, ինքնամփոփ, ընկճված ու անտարբեր:

Երեխան, որը մշտապես գտնվում է լարված, սթրեսային վիճակում, ունենում է ծանր բնավորություն, չի կարողանում կապեր հաստատել հասակակիցների և մեծահասակների հետ, ունենում է ոչ ադեկվատ, ցածր ինքնագնահատական: Ցանկացած կոնֆլիկտ երեխան կարող է ընկալել որպես սիրո բացակայություն, անգամ օբյեկտիվ քննադատությունը կամ սխալ վարքագծի մատնանշումը՝ ուղղված իր հասցեին: Հետևաբար ծնողների վեճերը սիրո բացակայության, հուսահատության, անպաշտպանության, տագնապի զգացման հիմք կարող են հանդիսանալ: Երբեմն հայրն ու մայրն ուրիշների մոտ ձևացնում են՝ երջանիկ են և հաշտ, իսկ տանը լիովին հակառակ պատկերն է լինում: Ծնողների կողմից հարգանքի կամ սիրո ծայրահեղ տարբերվող ցուցադրությունների դեպքում երեխան ծնողներին վերագրում է անարդարության, ստախոսության հատկանիշներ և կասկածում է ծնողների՝ իր հանդեպ սիրուն, ազնվությանը, նվիրվածությանը, առաջանում է հիասթափություն, և աշխարհի հանդեպ ձևավորում է կասկածամիտ վերաբերմունք: Սա խաթարում է հարաբերությունների կառուցման հմտությունների ձևավորումը, կարող է առաջ բերել շեղվող վարքագիծ: Իհարկե, հարաբերություններն առանց կոնֆլիկտի հնարավոր չեն: Խնդիրը կոնֆլիկտների լուծման տարբերակների, հուզականության դրսևորումների չափի մեջ է: Սակայն կարող են պատահել նաև բուռն պոռթկումներ: Մարդիկ տարբեր են, խառնվածքներն ու արձագանքները՝ նույնպես: Կոնֆլիկտային իրադրության մեջ կարևոր է յուրաքանչյուրի դերը: Երեխաներն իրավունք ունեն արտահայտել իրենց կարծիքը և որոշակի դեր խաղալ խնդրի

լուծման գործում: Դա կարող է լինել մեկ նախադասություն, օրինակ՝ ,ինձ դուր չի գալիս այս իրավիճակը կամ ,ես վատ եմ զգում, երբ ձեզ տեսնում եմ այսպիսին: Սա կարող է տանել լիցքաթափման, իրադրությանը գիտակցաբար մոտենալուն: Պատահում է նաև, որ երեխաների կարծիքը անտեսվում է, ընտանիքի անդամները գտնվում են սուր կոնֆլիկտային իրադրության մեջ, և երեխային սթրեսից խուսափելու համար մնում է պարզապես հեռու կանգնել իրադրությունից: Իհարկե, այս դեպքում էլ անտարբերություն է առաջանում: Ելքը մեծահասակների գիտակցական մոտեցումն է:

Երեխան ընտանիքի հայելին է, նա տեսնում և սովորում է այն ամենը, ինչը տեղի է ունենում ընտանիքում: Երեխայի մեջ ուրիշ մարդկանց, ծնողների նկատմամբ զգայուն, բարոյական վերաբերմունք դաստիարակելու համար անհրաժեշտ է, որ իրենք՝ ծնողները, կանգնած լինեն անհրաժեշտ մակարդակի վրա: Նրանց շնորհիվ են երեխայի մոտ ձևավորվում մարդասիրությունն ու աշխատասիրությունը: Երեխային շատ են անհրաժեշտ ծնողների ջերմ վերաբերմունքը, հոգատարությունը, խնամքը: Չափից ավելի խստությունն ու հսկողությունը պատճառ են դառնում երեխայի մոտ ագրեսիվ վարքի և կաշկանդվածության ի հայտ գալուն:

Հինգերորդ դարի պատմիչ Եդիշեն ասում է. «Տվե՛ք ինձ կիրթ և խելացի մայրեր՝ ես ձեզ կտամ կիրթ և խելացի հասարակություն», իսկ սուրբ Գրիգոր Նարեկացին ասում է, որ Աստված տղամարդուն տվեց քահանայագործության շնորհը, իսկ կնոջը՝ մայրության, և սրանցից ամենավեհ շնորհը մայրությունն է: Սրան ի հավելումն է կարծես Գարեգին Նժդեհն ասել. «Մայրերի ասիերի մեջ է պետք փնտրել ազգերի



ճակատագրերը»: Դաստիարակության, կրթելու ամենամեծ չափաբաժինը միշտ էլ կնոջն է տրվում, տղամարդունը հիմնականում նյութական բարեկեցության մասին հոգածությունն է բաժին հասնում, և հազվադեպ է, երբ

հակառակն է լինում:

2.1 Ծնողներից մեկի բացակայությունը երեխայի կյանքում

Ծնողների ներկայությունը և դերը երեխայի կյանքի առաջին տարիներին շատ մեծ է: Անգամ եթե երեխան ծնողներից մեկին կորցնում է վաղ տարիքում և չի հասցնում գիտակցել այդ կորուստը, դա դժվարություններ է առաջացնում ապագայում: Մայրը բավարարում է երեխայի պահանջները: Այդ պատճառով նրա մահը կամ հեռանալն առաջացնում է ճգնաժամ շրջապատող աշխարհի հանդեպ: Որոշ հոգեբաններ գտնում են, որ հոր բացակայությունն այդքան էլ խորը չի ազդում երեխայի վրա: Սակայն առանց նրա ներկայության, նրա հետ շփման, մոր ազդեցությունը զարգացման գործում ավելի է մեծանում, քանի որ երեխան չի տեսնում վարքի ուրիշ ձև: Նա զրկվում է տղամարդկային վարքի օրինակից, քանի որ հենց հայրն է երեխային տանում դեպի հասարակություն: Իսկ միայնակ մայրը՝ բեռնված տնտեսական խնդիրներով, ժամանակ չի ունենում զբաղվել երեխայով, նրա մոտ կորչում է հետաքրքրությունը, առաջանում է մոր եւ երեխայի օտարացում:

Ավելի բարդ է այս խնդիրը դառնում, երբ գործ ունենք դեռահասի հետ: Դեռահասի համար շատ կարևոր է նրա ընդհանուր սոցիալական վիճակը, որը ձևավորվում է նաև ընտանիքի կազմով. երկու ծնողների առկայությունը դրական ձևով է ներկայացնում դեռահասին իր շրջապատում, իսկ հոր բացակայությունը թուլացնում է նրա սոցիալական դիրքը: Ամուսնալուծության հետևանքն ավելի ուժեղ է ազդում տղաների վրա, քան աղջիկների: Նրանք դառնում են անկառավարելի, ագրեսիվ, ցուցաբերում են անինքնուրույնություն և տագնապ: Նրանց վարքը թե դպրոցում և թե տանը ավելի ինֆանտիլ բնույթ է կրում, քան լիարժեք ընտանիքներից դուրս եկած դեռահասինը: Ընտանիքի փլուզումը բացասաբար է ազդում ոչ միայն ամուսինների հարաբերությունների, այլև իր հետքն է թողնում ծնող-երեխա հարաբերությունների վրա: Դրանք կարելի է բաժանել երկու տիպի.

- Ամուսնալուծության հետ կապված՝ խախտվում է մոր հուզական հավասարակշռությունը: Նրա հոգևոր ուժը չի բավականացնում, որպեսզի դժվար պահերին օգնի որդուն: Այս իրավիճակը բարդանում է այնքանով, որ,

կորցնելով հոգևոր կապը երեխայի հետ դեռահասության շրջանում, մոր համար կա վտանգ, որ այն չի վերականգնվի դեռ երկար տարիներ:

- Մոր գերխնամքն է, որը երեխայի մոտ կարող է առաջացնել ատելություն մոր նկատմամբ կամ նրա իշխանությունից ազատվելու ցանկություն: Նման մայրերը խանդով են վերաբերվում որդուն, տալիս են նրան ամբողջ սերն ու քնքշությունը, որը չէին ծախսել ամուսնու հետ:

2.2 Երեխայի դաստիարակությունը

Ծնողները դաստիարակում են երեխային ոչ միայն, երբ նրա հետ խոսում կամ հրամայում են, այլ նաև տնից բացակայելու ժամանակ: Ծնողի ձայնի հնչերանգի մեջ տեղի ունեցող ամենափոքրիկ փոփոխությունն անգամ երեխան զգում է, այնինչ ծնողը կարող է դա չնկատել: Եթե երեխան երբեմն ծնողի հետ կոպիտ է խոսում, կարելի է չկասկածել, որ, հավանաբար, նման կոպտություն նա լսել է նրանից: Հատկապես երեխայի վրա շատ է ազդում մոր վերաբերմունքը հոր նկատմամբ. եթե մայրն արհամարհանքով է վերաբերվում ամուսնու հետ, ապա, բնական է, երեխան կհետևի նրա վարքին:

Մանկական սիրտը կծկվում է ցավից, երբ հայրը կոպիտ է վերաբերվում մոր հետ: Կռիվն ընտանիքում հոգեկան ցնցում է առաջացնում երեխայի մոտ ու խորը հետքեր թողնում: Եթե ծնողներն իսկապես սիրում են իրենց զավակին եւ ուզում են դաստիարակել նրան ճիշտ ձևով, պետք է ձգտեն փոխհամաձայնություն ստեղծել ընտանիքում:



Բարենպաստ ընտանիքը նպաստում է դրական մթնոլորտի, դրական հետաքրքրությունների, դիրքորոշումների, սրամաղրության ու համերաշխության ստեղծմանը: Անբարենպաստն իր մեջ ներառում է շփման, վերաբերմունքի ցուցանիշներ, որոնք դրական ուղղվածություն չունեն կամ ախտահարված են, և այն նպաստում է անձի սխալ

կայացմանը: Անբարենպաստ ընտանիքների ծնողների զգալի մասը չի կարողանում կազմակերպել ընտանեկան կյանքը, չգիտի ճիշտ մոտեցումներ երեխաների նկատմամբ. երբ բավարարում են երեխաների բոլոր ընդունելի և ոչ ընդունելի պահանջմունքները, չեն զգում, որ դաստիարակում են եսասեր, եսամոլ, չար, անտարբեր մարդու:

Դաստիարակության կարևոր ինստիտուտ է հանդիսանում ընտանիքը: Այն, ինչ երեխան ձեռք է բերում վաղ տարիքից՝ ընտանիքում, պահպանում է կյանքի ողջ ընթացքում: Ընտանիքը կարող է հանդես գալ որպես դաստիարակության դրական և բացասական գործոն: Դրական ազդեցությունը ձևավորման վրա այն է, որ ընտանիքի անդամներից՝ մայր, հայր, տատ, պապ, քույր, բացի ոչ ոք նրան ավելի չի սիրի և խնամի: Միաժամանակ, ոչ մի սոցիալական

ինստիտուտ չի կարող այնքան վնաս հասցնել երեխայի դաստիարակությանը, որքան ընտանիքը: Ընտանիքը հատուկ տիպի կոլեկտիվ է, որը մեծ դեր և նշանակություն ունի դաստիարակության հարցում:

Եզրակացություն

Ընդհանրացնելով կատարած աշխատանքը՝ մենք եկանք այն եզրակացության, որ ընտանիքի անառողջ մթնոլորտը, ամուսինների կոնֆլիկտային հարաբերությունները միանշանակ բացասական ազդեցություն են գործում երեխայի վրա:

Ցանկացած ընտանոքում վեճերն ու կոնֆլիկտներն անխուսափելի են, ուստի յուրաքանչյուր մեծահասակ ամուսնական զույգ պետք է սթափ գիտակցի, որ պատասխանատվություն է կրում ձևավորելու և դաստիարակելու առողջ երեխա

Այդ պատճառով ընտանիքում պետք է

- Կոնֆլիկտի թիվը նվազեցնել
- Ընտանիքում ստեղծել ջերմ մթնոլորտ
- Բարիդրացիական հարաբերություններ ստեղծել ընտանիքի բոլոր անդամների հետ:

Ընտանեկան կյանքը մի ամբողջ գիտություն է, որը շատ բարդ է և անըդիստ զարգացող, քանի որ երկու ճակատագրեր միացել են և դարձել ընդհանուր երկու աշխարհներ: Անհրաժեշտ է ապրել ընդհանուր հոգսերով և հաջողություններով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Նալչաջյան Ա. Ա. Անձ, Խմբային սոցիալականացում և հոգեբանական հարմարում., Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 1968, էջ 132-135:
2. Սեդրակյան Ս. Ա. Ընտանիքի հոգեբանության խնդիրներին դերային մոտեցման էությունը // Հոգեբանությունը և կյանքը, Երևան Զանգակ-97, 2010, էջ 9-23:
3. Սեդրակյան Ս.Ա. Ընտանիքի հոգեբանություն. Երևան: Ուրարտու համալս., 2010, էջ 216-2018:
4. Сысенко В.А. Супружеские конфликты. - М.: Мысль, 1989-С.44-56.
5. Василькова Ю. В., Василькова Т. А. Социальная педагогика: Курс лекций: Учеб. пособие для студ. пед. вузов и колледжей. - М.: Издат. центр «Академия», 1999. -С. 289.
6. Ковалев С. В. Психология современной семьи. - М.: Просвещение, 1989. - 340 с.
7. Буянов М. И. Ребенок из неблагополучной семьи: Записки детского психиатра:
8. Кн. для учителей и родителей. - М.: Просвещение, 1988. - С 234 с.